ՈՐՈՇՈՒՄ թիվ 1-7
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 25 օգոստոսի 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ Ռ. Պապայանի
Անդամակցությամբ Վ. Հովհաննիսյանի
Զ. Ղուկասյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Նինա Մանուկի Հացագարյանի 2006 թ. օգոստոսի 4-ին ՀՀ Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Քաղ. Նինա Մանուկի Հացագարյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածի 1-ին կետի եւ 280 հոդվածի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի պահանջներին: Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Նինա Մանուկի Հացագարյանի դիմումը՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածի 1-ին կետի եւ 280 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ, պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝
Անդամներ՝